Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Փոստային ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՄԱԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-31» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հունիսի 01-ին կնքված N «PD-234-06-18» պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիր:

Փոփոխության նկարագրություն՝ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր «Հայփոստ» ՓԲ ընկերության հետ:

Փոփոխության հիմնավորում՝ Առաջացել է փոստային ծառայությունների լրացուցիչ պահանջարկ:

Պատվիրատու՝ ***<u>ԱՆ «Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ</u>***

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 4

01.06.2018 թ.-ին կնքված թիվ PD-234-06-18 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «30»-ը նոյեմբեր, 2018թ.

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և **«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս Գլխավոր տնօրեն Ա. Վանյանի,** մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 01.06.2018թ.-ին կնքված թիվ **PD-234-06-18** Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո **«790 000 / յոթ հարյուր իննսուն հազար / ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերը փոխարինել **«1 190 000 / մեկ միլիոն հարյուր իննսուն հազար դրամ/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 01.06.2018թ-ին կնքված թիվ **PD-234-06-18** Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Հաստատել պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն լրացուցիչ համաձայնագրի N1 հավելվածի:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
5. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

---------- Հ.Ավագյան

Հաճախորդ՝

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ/
ք. Երևան, Հերացի 12
ՀՎՀՀ 02625503
«Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
ՀՀ 2471201669930000
Հեռ.՝ /010/ 55-06-01

Գլխավոր տնօրեն՝

---------- Ա. Վանյան